Կիրակի 27 սեպտ. № 158 — ԵՐԿՐՈՐԴ ՏԱՐԻ — 1915 Թ. — ВТОРОЙ ГОДЪ — Воскресенье 27 Сентября № 158

ԱՐԵՒ

ԳՐԱԿԱՆ, ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ ՕՐԱԹԵՐԹ

„АРЕВЪ" („Солнце") Литературно-общественная и политическая ежедневная газета

ԲԱԺԱՆՈՐԴԱԳԻՆ

ՌՈՒՍԱՍՏԱՆ

Տարեկան	7 ր. — կ.
Տասն ամիսը	6 ր. — կ.
Ութ ամիսը	5 ր. — կ.
Վեց ամիսը	4 ր. — կ.
Երեք ամիսը	2 ր. 50 կ.
Ամսական	1 ր. — կ.

ԵՒՐՈՊԱ

Տարեկան	25 ֆրանկ.
Կէս տարուանը	15 »

ԹԻՒՐՔԻԱ

Տարեկան	110 ղրուշ
Կէս տարուանը	60 »

ՊԱՐՍԿԱՍՏԱՆ

Տարեկան	9 ր. — կ.
Կէս տարուանը	5 ր. — կ.

Հասցէն փոխելու համար պէտք է ուղարկել 40 կ. մարկա։

Հեռախօս № 37-04.

Առանձին համարը ամեն տեղ 5 կ.

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Առաջ. եր. վրայ պետիտի տողը	35 կ.
Վերջին » »	15 կ.
Կովկասից դուրս » »	30 կ.
Վերջին երեսում » »	20 կ.

Խմբագրութիւնը և գրասենեակը՝ Баку, Большая-Морская 30. Արտասահմանից՝ Bakou, Rédaction «Arev».

Խմբագրութիւնը բաց է տեսակցութեան համար 9—2, կէսօրից յետոյ՝ 5—7.

Թղթակցութիւնները և յօդուածները պէտք է գրել թերթի մէկ երեսի վրայ, պարզ և ընթեռնելի։ Կարճը զգացուած կ'ընդուրվին խմբագրութիւնը յօդուածները և թղթակցութիւնները կրճատում և ուղղում է։

Адресъ, редакціи армянской ежедневной газеты „АРЕВЪ", Большая-Морская, 30. Телефонъ № 37-04.

ԱՐՇԱԿ ԵՒ ՊԱՒԵԼ ՏԷՐ-ՅՈՎՀԱՆՆԻՍԵԱՆՆԵՐԸ յայտնում են ծանօթներին, ընկերներին ու բարեկամներին, որ

ՆԻԿՈԼ-ԴՈՒՄԱՆԻ

մահուան տարեդարձի առթիւ կիրակի, սեպտեմբերի 27-ին կը կատարուի հոգեհանգիստ, ս. Թադէոս և Բարդուղիմէոս եկեղեցում, պատարագից յետոյ, ժամը 12 և կէսին։

ԸՆԿԵՐՆԵՐԸ ԵՒ ՄՏԵՐԻՄՆԵՐԸ յայտնում են, որ

ՆԻԿՈԼ-ԴՈՒՄԱՆԻ

մահուան առաջին տարեդարձի առիթով կիրակի, ամսիս 27-ին, տեղի կունենայ հոգեհանգիստ Ս. Թադէոս և Բարդուղիմէոս եկեղեցում։

Բագուի Հայոց Մարդասիրական Ընկերութեան վարչութիւնը և եկեղեցական ծխական դպրոցների հոգաբարձութիւնը յայտարարում են ի գիտութիւն հասարակութեան, որ կիրակի, սեպտեմբերի 27-ին

ԲԱՂԴԱՍԱՐ ԴՈՂՈՒԽԱՆԵԱՆԻ

մահուան տարելիցի առթիւ, պատարագից յետոյ, ցերեկուայ ժամը $12^{1}/_{2}$-ին հոգեհանգիստ է կատարուելու հանգուցեալի գերեզմանի վրայ—Նոր եկեղեցու բակում։

Գաղթականական Յանձնաժողովը

սրանով յայտնում է ի գիտութիւն հասարակութեան, որ որբանոցում անուանական մահճակալներ պահելու համար նուիրատուութիւններն ընդունւում են հետևեալ անձանց մօտ ու հիմնարկութիւնների մէջ.

1. ԹՈՒՄԱՅԵԱՆ ԱՐՇ. Գ., Վակզալնի փողոց սեփ. տուն.
2. ՍԵՐԵԲՐԵԱԿԵԱՆ ԱԼ. Ի., քաղաքային վարչութեան գրասենեակում.
3. ԵՐԻՑԵԱՆ ՎԱՀ. Դ., Թիֆլիսի առևտրական բանկում.
4. ԵՂԲ. ԹՈՒՄԱՆԵԱՆՑՆԵՐԻ գրասենեակում.
5. ԱՂԱՄԻՐԶԵԱՆ ԽՎ. Ն., Նաւթարդիւնաբերողների խորհրդի գրասեն.
6. Մարդասիրական Ընկերութեան կից Կանանց Կոմիտէում.
7. Կուլտուրական Միութեան կից Կանանց Կոմիտէում.
8. «Արև»-ի և «Բագու»-ի խմբագրատներում.

Թաղային ներկայացուցիչներ՝ Գասպարեան Նշան (Սպիտակ քաղաքում), Մարտիրոս քահ. Նահապետեան, Ս. Տէր-Զաքարեան, Մելիք-Աղամիրեան Խ., Մնացականեան Ս., Գր. Իւզբաշեան, Ներսիսեան Աբրահամ, Շչիեան Յով., Յովհ. քահ. Տէր-Յարութիւնեան, Չիժով Ս. Ի., Փանչուլիձէ Յ., Տէրտէրեան Ա. և Էնդամջեան Մ.։

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ

ԱՌԱՋԻՆ ՏԱՐԵԴԱՐՁԸ

ԴՈՒՄԱՆԻ ՅԻՇԱՏԱԿԻՆ

Մի սարսափելի տարի անցաւ այն օրից, երբ հայոց աշխարհի հերոսը աչքերը փակեց յաւիտենապէս։ Նա գնաց այն ժամանակ, երբ մենք պատրաստւում էինք մի ծանր, անհաւասար պայքարի։ Հայ երիտասարդները հաւաքւում էին զանազան կողմերից, Սասունի, Մուշի, Վասպուրականի արծիւները լսել էին պատերազմի փողը և հայրենասիրական հուրը սրտերում գալիս էին անվերջ, գալիս էին դէպի մի նուիրական դրօշակի շուրջը։

Հին օրերի փառաւոր, սքանչելի դրօշակիրը մնաւ սակայն այդ օրերում։ Այնքան տառապանքներից յետոյ նա չտեսաւ հայ ժողովրդի մեծ տառապանքը, ու այնքան պայքարներից յետոյ նա չմասնակցեց մեր մեծ պայքարին։ Հերոսի համար սա մի դառն մահ էր։

Դժուար է մոռնել մարդուս սրտի խորքերը, դժուար է հասկանալ հոգու հեռաւոր փոթորիկը, որ ալեկոծում է մտածող, զգացող անհատին։ Բայց կարելի է գուշակել, թէ ինչ զառանցութեամբ պէտք էր դիմաւորած լինի մահուան [illegible] քաջ սպարապետը։ Այն ժամանակ, երբ վաղուց դրօշակը բարձրանում էր հայ երիտասարդների գլուխների վրայ, երբ հայրենիքի ազատութեան մարտն էր սկսւում — Դումանը զրկւում է իր [illegible] աչքերը։ Ո՞վ գիտէ ինչ յոյզերով ու վրդովմունքով հեռացաւ նա մեզանից, հեռացաւ ընդմիշտ այդքան ու անձնուէր մարդկութեան։ Եւ անշուշտ, եթէ որ և է վիշտ կրծում էր մահուան սև ժամին հերոսի անհանգիստ սիրտը, — այն չէր, որ ինքը մեռնում է, որ զրկւում է անհատական վայելքից ու փառքից, այլ այն էր, որ մենակ է թողնում իր մեր ժողովրդին, իր սիրելի լենկերներին պայքարի ծանր ճամփի վրայ։

Մի տարի անցաւ այն օրից։ Այս տարուայ ընթացքում մենք ունեցանք երերական անկումներ, մենք տուինք անկարելի զոհեր, բայց և ունեցանք պատմական անմոռանալի յաղթանակներ, եթէ վերջին գագթը, Հայաստանի ծագումը զարհուրելի խուճապը ենչում է բոլոր հայերի սիրտը և թևում է մեր պատմութեան ամենադառն փորձութիւններից մէկը — Վանի յաղթութիւնն էլ թևում է մեր հերոսութեան փայլուն, սրբազան օրինակը։ 1915 թուականը մեզ համար կլինայ ընդմիշտ յիշատակելի։ Այդ թուականում ունեցանք արիւնոտ յուշեր, բայց և ունեցանք պայծառ մայիսի 5։ Պատմութիւնը նորէն կը մի անկիւն կրգրանի արեւի տակ, բայց մեր տառապանքը ու մեր յաղթանակը կը մնան իբրև կենդանի էջեր հայոց ժողովրդի գրքում մէջ։

Դումանի հոգին կապուած է բարոյապէս, և կապուած կը մնայ միշտ, այդ կենդանի էջերի հետ։ Նա դեռ շատ վաղ հասակից սկսել է, զգացել է հայութեան տառապանքը և այդ տառապանքի դէմ հանել է իր կրակը, իր սիրտը, իր երկաթէ կամքը։ Մայիսի 5-ի պատմական յաղթանակի նախահայրերից է նա, նախահայրերից՝ ոչ միայն այն մտքով, որ հերոսների սերունդը էնենդայ բաղադրամասը, այլ և այն մտքով, որ Վասպուրականի երկնքի տակ շատ հին ժամանակներից պատրաստել է նա գեղեցիկ օրը։

Պատմութիւնն էլ, ազգերի կեանքն էլ աղաչէս է ընթանում։ Տառապանքը ու յաղթանակը, ինչ որ դէպ մեր կեանքում յաղթութիւն, երբէք անկումներ չունենայինք և երբէք չըլինէինք ու չընկնէինք։ Առաջադիմութեան համար պարզ է, և ազատութեան դժուարութեան ճանապարհ միայն յարգ ունի։ Մի ժամանակ կար, երբ հայութիւնը ինքն իրեն չէր ճանաչում, ուրիշները և երբ չգիտէր ինչ ուղիով քայլել։

Ազատագրութեան նախաձեռնողները ցոյց տուին իր եկեղեցական ուղին։ Դումանը նրանց մէջ առաջիններից էր։ Մի օր ուսուցիչ, մի օր զինուոր Թիւրքայ-Հայաստանում, մի օր խմբապետ, մի օր թագաւորական զօրքերի հերոսական ոսոխն ասպարէզում, մի օր ինքնապաշտպանութեան ղեկավար Արցախում, Նա միշտ առաջնորդեց իր ժողովուրդը, Նա վերանորոգեց կովկասի և Հայաստանի բարձրութիւնների վրայ այն հին քաջութիւնը, որ երբեմն փայլել է մեր պատմութեան էջերում և վերանորոգեց այն կրակը, որ ազգերի գերութեան տարիներում մարում էր։ Եւ նրա խորհուրդը հոգու մէջ արթնացաւ քաղաքականութեան բարձր սկզբունքներում։

Ինչ էինք մենք առանց Դումանի և առանց նրա արժանաւոր ընկերների։ Քաղաքական մի անփայլ, անկարգ ու հաւաքածու, որին արհամարհում էին ամենքը ու այս աշխարհում, որին ոտնատակ էին տալիս բոլորը։ Ինչ էինք մենք այն ժամանակ, երբ մի Դուման գուրս էր գալիս հայերի հետ բանակցութեան դէմ, մարդկութեան խիղճը հոգում, պաշտպանութեան կրակն ամենը ոտքը ձեռքում և աւրքը չկար։ Նա կարդացնում է մեր արդարադատութիւնը։ Նա պարզացնում է հայրենի թիրախը ոստեբիւնի, որ դեռ պահում է մի ազգի ժողովրդի, որ զարթնում է ժողովրդի սեպհականութիւնը...

Եւ կը ստեղծագործի այսուհետև հաշ Դումանները։ Զարգացածական չունենք կայ մեր մէջ, նրա հաւաքումը է մի արտադրող սերունդ, մի անհրաժեշտ ժողովուրդ։ Որքան էլ փորձութիւնները յանկարծական ծանրանան այս գեղերի կեանքի ձեռքի վրայ։ Պարզ է այն շաւիղը, որ բռնեց նա կեանքի ձիւղերով։ Հատուկ ամեն, քանի որ կայ հերոսի անձնուէր գործը։

Մի տարի է անցել այն չարաշուք օրից։ Հանգստանում է նա մայր հողի ծոցում, Թիֆլիսի Խօջիվանքի գերեզմանատանը, իր նշանաւոր զինակից Սիմէոն Զաւարեանի կողքին։ Եւ նայում են նրանք, այդ երկու արդար հոգիները այն զարհուրելի անցքերին, որ պայթում են մեր աշխարհի վրայ։ Տրտում են նրանք, դառնացած են նրանք հայ ժողովրդի անհուն վշտով, եթէ երբ է մեռեալները կարող են զգալ, եթէ այս աշխարհի չարութիւնը կարող է հաղորդուել նրանց հոգուն։

Բայց այդպէս չեն մնայ յաւիտեան։ Նոր սերունդը, նոր հայութիւնը նրանց երկաթէ կամքով, մաքուր խղճով ու մեծ հայրենասիրութեամբ լեցուած կարող են յաղթել այսօրուայ դժուարութիւնը։

Եւ մենք աւելի երջանիկ պայմանների մէջ կըյիշենք անշուշտ մեր հերոսների, մեր փառապանծ հերոսների միւս տարեդարձները…

ՅՈՒՆԱՍՏԱՆԻ ՆՈՐ ՄԻՆԻՍՏՐՈՒԹԻՒՆԸ

Բալկանեան անցուդարձի մէջ Յունաստանի նոր մինիստրութիւնն անշուշտ շատ կարեւոր նորութիւն է։ Այն ժամանակ, երբ Վենիզելոսը Յունաստանի ճակատագիրը կապել էր դաշնակիցների ճակատագրին—մէկէն տապալուեց նա։ Պարլամէնտի մէջ մեծամասնութիւն ունէր, երկրի հասարակական կարծիքն ամբողջովին նրա կողմն էր—և սակայն գահի դաւադրութիւնը աւելի յաղթական դուրս եկաւ։ Այսպէս են խաղ անում օտար իշխանները Բալկանեան չարաբախտ ժողովուրդների հետ։ Մի դժբախտութիւն է, որ այս համաշխարհային պատերազմի ժամանակ Բալկանեան գահերի վրայ նստած են աւստրօգերմանական գործակալներ։ Մի դժբախտութիւն է, որ ժողովուրդները չեն կարողանում իրենց խղճով ու կամքով միանալ նրանց, որոնց յաղթութիւնից է կախուած միայն ու միայն փոքրիկ ժողովուրդների ապագան և մանաւանդ Բալկանների բախտը։

Բայց ինչ էլ որ լինի, դրութիւնը դեռ յուսահատական չէ և դաշնակիցների գործը դեռևս վճռած չէ Բալկանեան թերակղզում։ Բօլգարիայի մասին հարց չկայ անշուշտ։ Նրա կառավարութիւնը վաղուց է միացել պրուսական կառքին։ Երկրորդ Բալկանեան պատերազմից յետոյ ոչ մի օր չէ եղել, որ Բօլգարիան ազատուած լինի Գերմանիայի և Աւստրիայի հրահանգներից։ Եւ այն ժամանակ, երբ պայթեց թիւրքական պատերազմը, Բօլգարիան դարձաւ նրա ծածուկ դաշնակիցը, ծառայեց Թիւրքիայի շահերին, դաւեր նիւթեց միշտ դաշնակիցների գործին։

Այսօր էլ Ֆերդինանդի կառավարութիւնը շարունակում է իր հին քաղաքականութիւնը։ Ինչպիսի վախճան կունենայ վերջին պահուն գերմանական գործակալների անարժան խաղը։ Բօլգար ժողովուրդը, բօլգար ընդդիմադրական կուսակցութիւնը, որ պարլամէնտում գրեթէ հաւասար է կառավարական կուսակցութեան, ինչ գիրք կբռնեն—առայժմ ոչինչ հաստատ չէ։ Պարզ է այսքանը, որ Ֆերդինանդի կառավարութիւնը զօրաժողով յայտարարեց, պատերազմի պատրաստութիւններ տեսաւ առանց բօլգարական պարլամէնտի։ Սա մի պայծառ ապացոյց է, որ Բօլգարիայի արկածախնդիր կառավարիչները չկարողացան ժողովրդի ներկայացուցիչների առջև հանել իրենց քաղաքական ծրագիրը։ Անշուշտ եթէ նրանք համոզուած լինէին, թէ պարլամէնտը կմիանար իրենց վատթար գործին—այդպիսի պարլամէնտը կը հաւաքուէր իսկոյն։ Յաղթանակի համար դա մի կարեւոր գործօն էր, որ նրանք չէին կամենայ ձեռքից բաց թողնել։ Բայց նրանք հիմնաւոր երկիւղ ունէին, որ մինչև իսկ իրենց ճնշումներով առաջացած պարլամէնտը, մինչև իսկ կառավարական կուսակցութիւն կոչուած հոսանքը դէմ կըլինէր պրուսական գործակալների դաւերին։

Ի՞նչ կասի այդ վերջին ժամին երկիրը—չգիտենք։ Թուցէ դարձեալ հնար կայ, որ ժողովուրդը իր կամքով ելնէ հրապարակ, թուցէ դարձեալ մի ճամբայ կայ, որ ժողովուրդն ինքը տնօրինէ իր գոյութեան ամենադառն հարցերը։

Ինչ վերաբերում է Յունաստանին—չի կարելի պնդել, թէ այս մինիստրութիւնը բոլորովին տարբեր ուղիով պիտի ընթանայ։ Պէտք է խոստովանել, որ կրէտացի նշանաւոր մինիստրը շատ համարձակ քայլեր արաւ։ Նա թոյլ տուեց դաշնակիցներին զօրք հանել Յունաստան այն ժամանակ, երբ շատ յոյների կարծիքով դեռ որոշ չէր Բօլգարիայի դիրքը, երբ Համաձայնութիւնը դեռ ևս չէր կտրել իր բոլոր կապերը Բօլգարիայի հետ։ Նրանք վախենում էին, թէ դաշնակիցները Բօլգարիային ճակատագրական քայլից յետ պահելու և նրան դէպի Թիւրքիա շարժելու համար կըզրաւեն և կը տան նրան Մակեդոնիան, անգամ Կաւալան։ Երբ այս երկիւղը կար, բնական է, որ վաղաժամ կը դիտուէր Վենիզելոսի կտրուկ վարմունքը։

Խնդիրը բոլորովին տարբեր կերպարանք կը ստանար Յունաստանի համար, եթէ Բօլգարիան վերջնականապէս պատերազմի ելնէր Սերբիայի դէմ և եթէ դաշնակիցներն այլևս «չփրկաշահէին» Բօլգարիային։ Բոլոր նշանները ցոյց են տալիս, որ այդ պարագային Յունաստանը պիտի միանար դաշնակիցներին և նրանց աջակցութեամբ պիտի լուծէր իր ազգային իղձերը Բօլգարիայի նկատմամբ։

Վերջին հեռագիրների մէջ մի լուր կայ, որ իբր թէ Յունաստանի ընդդիմադիրները պահանջում են իրենց դաշնակցական պարտաւորութիւնները խզել Սերբիայի հետ։ Բայց այս լուրը ըստ երևոյթին շատ էլ հիմնաւոր չէ։ Նոր մինիստրութեան գլուխը, Զաիմիս, թւում է թէ զոհ չի գնայ այդ անարժան պահանջներին, մինչև իսկ եթէ այդպիսի պահանջներ արտայայտուած լինեն։ Զաիմիսի մասին հեռագրական տեղեկութիւններն իրար զուգադիպում են։ Ասուած է, որ նա կամենում է մօտ լինել Վենիզելոսի կուսակցութեան, գրաւել նրա վստահութիւնը։ Ասուած է, որ դաշնակիցների շրջանում նրա անուանումը թողել է լաւ տպաւորութիւն։ Շատ հնարաւոր է և միանգամայն հաւանական է որ այսպէս լինի։ Ինչ որ ուզում էր անել Վենիզելոս շատ համարձակ կերպով, կարող են անել միւսները այսուհետև ևս Զաիմիսի դէպս. որոշ է մի բան, որ եթէ Յունաստանի ժողովուրդը և պարլամէնտը որև է դեր ունենան, նրանք անշուշտ կերթան դաշնակիցների հետ միասին։ Եթէ այդպէս էլ, սակայն, յաղթական դուրս գայ պալատը, որ ժողովուրդ չէ և գահը, որ երկիր չէ—դաշնակիցների գործը իրօք որ շատ կը կնճռոտուի և նրանց վերջնական յաղթութիւնը լուրջ արգելքների կըհանդիպէ…

ՔԱՋԻ ՅԻՇԱՏԱԿԸ

Թէ ինչ նշանակութիւն ունեցաւ Նիկոլի և իր նման ընկերների գործունէութիւնը մեր նոր կեանքի կազմաւորման խնդրում և ինչ տեղ են բռնում նրանք մեր նորագոյն պատմութեան մէջ—այդ կը պարզաբանի թերևս մեր ամենամօտիկ ապագան, երբ կանցնեն, կը վերջանան հայ երկրից աւերիչ հողմերը, երբ կըսկսուի խաղաղ, ստեղծագործող աշխատանքը և հարկ կը զգացուի պարզորոշել մեր նոր կեանքի այն հիմնական գծերը, որոնցով սկիզբ առաւ ու զարգացաւ այդ կեանքը։

Դրա կարիքը կը զգացուի մօտ ապագայում, որովհետև նա անհրաժեշտ կը լինի մեր յետագայ առաջդիմութեանը նպատակայարմար նոր միջոցներ հայթայթելու համար։

Նիկոլն ու իր ընկերները մեր նոր պատմութեան արշալոյսին, միանգամայն արքայական թրթիռներով լեցուն այդ օրերին, իրենց մտաւոր և ռազմական կրկնակի կորովով այնքան հսկայական ձեռքով դրին անկիւնաքարը այն շէնքի, որի վրայ այնքան խանդավառ սիրով պիտի աշխատէր մի ամբողջ սերունդ։ Նիկոլի ու իր ընկերների դցած սերմնահատիկից մեծ առնական մայլ, անհամբոյր երկնքի տակ պիտի բարձրանար մի ամբողջ հերոսական սերունդ, որ փարատէր կուտակուած թախծերը, որ ամպրոպի նման ցնցէր ու պարզէր խեղդող մթնոլորտը։ Նրանց բերած թարմ հոսանքներով ազատատենչ սրտերը շնչելու օդ պիտի գտնէին։

Հիմնական յեղաշրջում էր բացւում հայ հոգեկան աշխարհում, երբ Աղբրպասեան, Դօլոզեան և դրանց յետևից Դումանն ու ընկերները աւելի հին նուաճուած հաւատով հայ գիւղերում դպրոցներ, գրադարաններ էին հիմնում մի ձեռքով, իսկ միւս ձեռքով անձամբ գնում էին Տաճկա-Հայաստանի սարերկական դաշտերում արթնացնող ու ահարկու հրազէնների առաջին որոտները պայթեցնելու։

Երբ Աղբրպասեան, Դօլոզեան և ընկերները Հայաստանի հողի վրայ թափում էին հայ հերոսական արեան անդրանիկ կաթիլները, այնտեղ մթնոլորտը ապրում էր մի սուր բուռնութեամբ, որ այնուհետև այնքան մասսաներ պիտի հանէր ազատութեան ճամբաների վրայ և այնքան տաք թափուող արիւնով պիտի ոռոգէր, հասունացնէր հայ հերոսի առաջին արեան հետ հայ դաշտերում ծլած ազատութեան հասկերը։

Այդ պատմութիւնը մեր աչքերի առջև է, մեր ժամանակի անփոխարինութիւնն է և դրանով էլ նա մեր ազգի համար իր արժէքով դեռ շատ չէ որոշ։ Այդ արժէքը երէկ մեր աչքում դեռ աւելի քիչ էր, քան այսօր և այսօր աւելի քիչ կըլինի, քան վաղը։ Դումանը երբ մեռաւ մի տարի առաջ, մեր աչքում այն մեծութիւնը չունէր, ինչ որ այսօր, մի տարի յետոյ։ Նրա աստանդական կեանքը հայ բնակավայրերում, նրա փոթորկալից մղումները դէպի վտանգի ու արեան ձորերը, որ նմանում էր հողը յաւիտեան աշխատանքով հերկող և ջրող ձեռքով հասրիկը նրա մէջ գցող ջլապինդ երկրագործին,—տարեց-տարի աւելի ու աւելի տալիս է իր բաղձալի փառանկը։ Հայաստանի և այնտեղ Կովկասի անհամար վայրերում անջինջ յիշատակներ է գրել և հայ ժողովրդի սրտում անմեռ անուն է թողել նա։

Այսօր, նրա մահուան առաջին տարելիցին, վերակենդանանում է մեր մտքի մէջ այն պայծառ դէմքը, այն ջերմ սիրտը, որ մեզանից շատ-շատերին ընկեր ու մտերիմ է եղել։ Այսօր բացւում է մեր առաջ այն գործի մեծութիւնն ու վեհութիւնը, որին նուիրեց նա իր ջերմ իղձերը, խիզախ տենչերը և ամբողջ կեանքը։

Այսօր մենք լցւում ենք հիացմունքով դէպի նրա քաղցր յիշատակը։ Այս դժբախտ օրերին, այս դաժան մաքառութեան վայրկեաններին մենք թափանցւում ենք նրա անմեռ հոգով, զգում ենք մեր մէջ նրա արիութիւնը՝ անվհատ տանելու պայքարի մեր դժնդակ խաչը, մինչև նրա յաղթական վերջը։

Ա. Գ.

ՆԻԿՈԼ ՏԷՐ-ՅՈՎՀԱՆՆԻՍԵԱՆ
(ԴՈՒՄԱՆ)
(Համառօտ կենսագրութիւն)

Մի տարի է անցել այն օրից, երբ Դումանն էլ գնաց իր յաւիտենական անդարձ ճանապարհը։

Մի փոթորկոտ ու ալեծուփ տարի, որ հազարաւոր զոհաբերութիւնների հետ եկել է միաժամանակ փայլուն յոյսերի ու արդար ոգևորութեան աղբիւր։

Այս մի տարուայ ընթացքում աշխարհը քանիցս տեսել է հայ մարդու չլսուած հոյաձնութիւնն ու նրա յամառ, տևական պայքարի ու դիմադրութեան զարմանալի գործերը։

Ընդհանուր ոգևորութեան ու համատարած սարսափի ժամին տեսել ենք բազմաթիւ զոհեր ու տեսել հազարաւոր հերոսներ, սակայն ոչ մէկն էլ դրանցից չի կարող նմանեցնել այն մարդկանց գործը, որոնք ամօլ ու անփառասէր տարիներում զէնք են բարձրացնում դաժան ու անհաւասար պայքարի համար, ձայն են բարձրացնում՝ ազատ ու մարդավայել կեանքի համար…

Այդ մարդկանց կեանքը միշտ ուսանելի է, միշտ օրինակելի ինքնաճանաչ սերունդների համար։

Ահա թէ ինչու այս ազնիւ մարդու՝ Դումանի մահուան տարեդարձին մենք վերստին դառնում ենք նրա կենսագրութեան։

Մեր ազատագրական շարժման այս անձնուէր մարտիկը ծնուել է 1866 թ. ապրիլի 18-ին, Խաչէն գաւառի Ղշլաղ գիւղում։

1882 թուին աւարտելով թեմական դպրոցը այդ վառվռուն երիտասարդը վճռում է իրեն նուիրել հայ ժողովրդի վերածնութեան գործին։ Ղարսայում երեք տարի ուսուցչութիւն անելուց յետոյ Բագրատ Թաւաքալեանի հետ 1891 թ., հայ ազատագրական շարժման այդ ազնիւ ուխտաւորը երևում է Պարսկաստանի Թաւրիզ քաղաքում իբրև ուսուցիչ։ Ուսումը [illegible] էր, և այդ ժամանակուայ հայ ուսուցիչը և ժողովրդական դաստիարակութեան ներկայացուցիչ էր, և գրադարաններ հիմնող, և զէնք տեղափոխող, և զինուոր ու ղեկավար…

Նիկոլն էլ գնաց այդ ճանապարհով և շուտով դարձաւ Պարսկաստանի մեր գործունէութեան առաջնակարգ դէմքերից մէկը…

Թաւրիզից նա գնում է Սալմաստ ու զբաղւում է Դերիկի պատմական խնդրով։ Այդ տեղից առաջին անգամ մտնում է Թիւրքիա, այն վայրը, ուր ամեն օր, ամեն վայրկեան անարգանք էին հասցնում մեր ազգային գոյութեանը։

Նիկոլը փոթորկի նման սուրում է դաշտերի ու լեռների վրայով։ Քրդերը զինուած առաջ են գալիս։ Տեղի է ունենում Բօղազ-Քեասանի նշանաւոր կռիւը, ուր Նիկոլը հրաշքներ է գործում։ Այդ կռիւը սարսափեցնում է քրդերին։ Այդ ժամանակ է, որ Նիկոլը դառնում է սարսափելի Դուման ու քրդական երգերի և գիւղերի։ Եւ ահա Հայութեան համար սա մի քաղաքական յաղթանակ էր։ Քրդերը, պարսիկները, թուրքերը տեսնում են, որ դարերով սարկութեան մէջ մնացած հայը ինչ զարմանալի գործեր կարող է կատարել և ինչ մեծ քաջագործութեան է ընդունակ…

1896 թուի յունիսի 2-ի յայտնի դէպքերից յետոյ Նիկոլը մտածում է միայն, թէ ինչ ձևով Վանի կոտորածի վրէժն առնի։ Եւ պատրաստում է Խանասորի արշաւանքը, որից երևաց, որ հայ ժողովուրդը կարող է ոչ միայն հերոսաբար մեռնել, այլև խիզախութեամբ յաղթանակներ տանել։ Օտար մամուլը գնահատել է ժամանակին Խանասորի գործը…

Այնուհետև Դումանը երևում է Կովկասում, երբ 1903 թուականին նոր հոգսեր էին ստեղծուել եկեղեցական կալուածների գրաւման դէմ ծնուած բողոքի շունչը դարձաւ Դումանը։

1904 թուին, Անդրանիկի հերոսութեան փայլուն տարիներին, Տաճկա-Հայաստանում ընդհանուր շարժումներից յետոյ Դումանը կրկին յայտնւում է Կովկաս, երբ 1905 թ. պայթել էր ամենքին յայտնի Կովկասի մեծ աղէտն ու խառնակութիւնը, որով 1905—1906 թուականներին Կովկասը դարձաւ արիւնահեղ կռիւների ասպարէզ։ Հայերը պիտի ճզմէին վերջ դնելու կռիւներին ու ազատելու Կովկասի քաղաքակրթութիւնն ու քաղաքական պրոգրէսը։

Այս անհրաժեշտ աշխատանքի մէջ Դումանը պատմական ծառայութիւն արաւ։ 1909 թ. նա հարկադրուած եղաւ հեռանալ Կովկասի սահմաններից—անցնել Պօլիս, այնտեղից Եգիպտոս՝ բժշկուելու համար։ Այնուհետև Նիկոլը լինում է Եւրոպայում ու 1910 թ. գնում Կոպենհագէն՝ սոցիալիստների կողմից միջազգային ընկերվարական համագումարին մասնակցելու համար։ Յետոյ կրկին անցնում է Կ. Պօլիս ու ջերմ աջակցութիւն ցոյց տալիս հայ ազատագրական շարժման գործին։ Վերջին չորս տարին Ղարաբաղի հինաւուրց հերոսը աստանդական կեանք վարեց։ Եղաւ Թիւրքաց-Հայաստանի նահանգներում, եղաւ Պարսկաստանի զանազան վայրերում, ղեկավարեց յեղափոխական կռիւները և ամեն տեղ էլ ծառայեց այն դրօշակին, որ ընդ-

ԹԵՐԹՕՆ

ՎՐԷԺ
(Նուէր հայ մարտիկներին)

Վրէժ ու ցասում, թօյն է ու լեղի, մեր սրտերն հիմա
Մեր խիղճը քար է՝ կարծր, անողոք… չար ենք անխնայ.
Էլ ոչ մի աղերս մեր պարզած սուրը պատեան չի դնի.
Էլ ոչ մի զղջում զազրած սրտում ներում չի գտնի։

Հիմա անկշտում արեան ենք կարօտ ծեր ու պատանի.
Թող արիւնլուայ վրէժի ծովում մեր օրը մթնի.
— Մենք տեսանք անմեղ մեր մանուկներին դաժան յօշոտած,
Մեր որդեկորոյս մայրերի առջև կանգնեցինք անլաց.
Մեր մեռելները անթաղ նեխուեցին դաշտ ձորերում,
Մեր շուրջը հիմա մահ է ու կսկիծ, սուգ է թափառում։

Մենք տեսանք յաճախ մեր աղջիկներին լկտի անարգուած.
Մերկ ու այլանդակ մասերից պառանէշներ կախած.
Լսեցինք ողբը՝ ծով կորուստների զուլումից մայթած,
Լսեցինք անսիրտ, մենք մերինների մեծ ցաւի դիմաց։

Ու դեռ հնչում են մեր ականջներում
մեր բազմաչարչար վեհ հոգիների
— Արդար բողոքի և ազատութեան մարտիրոսների,
Կախաղաններին, մութ զնդաններում ծեծից մահացած
Հարիւր ու հազար նահատակների գոյժը անմոռաց…
Եւ այսպէս զարկէր, զարկէր շարունակ լեռում ու գիւղում.
Մեր սրտերն հիմա վրէժ է պոռթկում վրէժ ու նողկանք,
Մենք էլ գութ չունենք, սրտերս լեղի, խօսքերս՝ կծու
Ու մեր հարուածը հիմա կը լինի դաժան, մահացու։

Արմենուհի Տիգրանեան

ԱՆԳԻԼ
ՆԻԿՈԼ-ԴՈՒՄԱՆԻՆ

Տատս պատմել էր ինձ Անգիլի մասին…

Նա իր ձիով անցնում է դաշտերի վրայով մենակ։ Երբ հեռու—լեռան տակ հօտաղը եզները քշում է հովը հանգստացնելու, նա ասում է ինքն իրան.

— Ահա հեռուն գնում է Անգիլը։

Եւ պառկում է նա ուռիների տակ մէջքի վրայ, աչքերը գցում է ծառերի կանաչ սաղարթին։ Իսկ նրա շուրջը ամայի լեռան փէշերն են և միայն հեզօր արևն է տաքացնում հողը։

Ասում են, որ ոչ ոք Անգիլին մօտենալ չի կարող. նրան միայն հեռուից են տեսնում։

Տատս ասում էր, որ նա դաշտերի պահապանն է։

—

Երբ մեծացայ, ես տեսայ Անգիլին։ Նա ձիու վրայ անցնում էր լեռների լանջով։ Այն ժամանակ ես թեթև էի, աչքերիս մէջ շքեղ գոյներ էին բացւում և ամեն տեղ ինձ կանչում էին լեռների բարձր գագաթները։

Եւ ես կանգնած էի ամենաբարձր լեռան գագաթին, երբ տեսայ Անգիլին։

Ինչպէս Աստուածային գիրք, լայն բացուած էր շքեղ հովիտը. լեռնալանջերը և մինչև խոր հեռուները թարմութիւն ու կանաչ էր շնչում. արծաթէ փայլով թաւալւում էին գիլ վտակները և ցօղունների ծայրին նստած ճըլըլըում էր արտոյտը։ Հազիւ երբեմն մի մեծ թևաւոր երևում էր բարձրում, պտոյտներ գործում ու կորչում էր լեռների յետևը։

Ի՞նչ թովիչ աշխարհ. լուռ, անձայն, բայց որ կարծես ամեն բան խօսում է, շնչում։ Ինչպէ՜ս շոյիչ է Աստուծոյ գիրքը…

Եւ Անգիլը այնտեղ էր, անցնում էր լեռնալանջով իր երիվարի վրայ…

Հազիւ տեսնում էի, ինչպէս արտափում էին ձիու սմբակները լանջի վրայ և ամպրոպը փոթփոթում էր ջինջ այերում…

Արցունքները խառնուեցին աչքերիս մէջ, ծունկերովս զգեցի հողը, մի յորդ հեկեկանք սրտիս խորքից բարձրացաւ վեր, կուրծքս ծփծփաց ու ինչպէս արևը պատռած սև ամպերի միջով, հոգիս բացուեց, պայծառացաւ ու փռուեց լեռների վրայ։

Այն ժամանակ ես զգացի հեռուից եկող բուրմունքները, լեռնալանջերի ախորժ գրկանքը ու ինչպէս հարազատ մայր, բախտաւորութիւնն իր թևերի տակ հովեց, գուրգուրեց ինձ…

Ես ճանաչեցի այնտեղ, որ Անգիլը երկրի բախտաւորութիւնն է…

—

Մի անշէջ կարօտ այրում էր ինձ.

Մի հեռու ձայն անլուռ կանչում էր ինձ.

Եւ մի լուռ վիշտ անվերջ լացացնում էր ինձ…

—

Ես գնում էի աւեր ճամբաներով, ես քայլում էի այրուած դաշտերով. ջրերը պղտոր էին, արևն անզուրգուրանք ու կիզիչ… Եւ Աստուածային գիրքը հեռու ու փակ ինձ համար…

—

Ու միւս անգամ ես տեսայ Անգիլին… Փոշոտ ճամբի վրայ գնում էր նա իր ձիու վրայ… Նրա շուրջը անցորդներ էին՝ ծանօթ, անծանօթ, որ փոշիների մէջ հասնում իրար, հանդիպում, ողջունում ու անցնում էին շտապ։

Անգիլի ձին գնում էր ճամբի եզրին՝ թմբի վրայով։ Ու ես մօտիկ նայեցի նրան. երեսն այրուած էր և յօնքերի ու արտևանունքների վրայ նուրբ փոշի էր նստած. ձին իր առոյգ սմբակների մէջ յոգնած էր…

Ո՜հ, իմ ցնորք, լեռնային հովիտ, կուսական ջրեր. դուք մշուշոտ հեռուներ և հրապոյրի կանչեր… Արտոյտները ճախրում ու բաղէները սաւառնում են այնտեղ… Հեռու՜, հեռու է այժմ նա, բարձր լեռների յետևում, օտար ու անմատչելի… Իսկ Անգիլի ձին տրոփում է ահա փոշոտ ճամբի եզրին բարակ թմբի վրայ…

Ճամբի վերջին գիւղն է՝ խարխուլ պատերով, նեղ, ոլորուն անցքերով, ուր ցրուած են քուրջեր ու ոսկորներ… Ճռալով բացւում են լուկոն դռները, փոս ընկած շէմքից նայում է մի աղջիկ տխուր աչքերով… Երբեմն գնում են կծկուած պառաւները և մեկուսի, գլուխները ցած են դրել յոգնած ծերերը…

Բայց, ինչպէս մի զուարթ ծիծաղ այս յոգնութեան ու տխրութեան վրայ հնչում է մօտիկ Անգիլի ձիու խրխինջը և լսւում է նրա առոյգ սմբակների տրոփիւնը…

—

Եւ քեզ եմ կանչում, ով հեռուն դու Աստուածային գիրք, ով թարմութիւն, թեթևութիւն… Առոյգ լեռնալանջեր, ջինջ, վէտ-վէտուն կանաչներ… Աշխոյժ, յաւերժ շարժուն մանկան խաղեր…

Եւ երեկոյեան սրտիս զանգի պէս հնչում է հերիաթն իմ ականջներին. վաղեմի թովիչ հերիաթն իմ միամտութեան, դողդոջուն տատիս.—

Անգիլը ծնուել է երկրի խորքից։ Լեռնահովիտն իր շքեղութեան մէջ անկենդան փռւում էր արևի տակ, ինչպէս ներհող գեղեցկուհի։ Առոյգ լեռնալանջերը, հրապուրիչ հեռուները և գիլ վտակը կեանքի ու շնչի էին կարօտում… Եւ ողջ գիշեր տառապում էր երկրի յատակը, խաւարը մեղմ ցնցւում և քնի մէջ վեր էր թռչում արտոյտը… Հեռուներից եկող մի հայում կարծես զարթեցնում էր ամենքին…

Եւ առաւօտեան մթնշաղին, երբ արևն իր կարմրաւուն շղարշը տարածեց երկնքի եռեւն ու ոսկէ վարսերը խուրձ-խուրձ փռեց սարերի գլխին, լեռնային հովտում երկու քով-քովի բլուրները յետ տարան իրենց փէշերը և երկրի խոր անդունդներից խուլ որոտմունքների հետ արագ վեր բարձրացաւ Անգիլը՝ օդի մէջ փռած իր թևերը և աչքերը յառած ժպտուն արևին…

Իսկ հեռուներից վրնջիւնով և ցնծաբեր դոփիւններով արշաւում էր նրա նժոյգը… Բլուրները մօտ քաշեցին իրենց փէշերը և ծածկեցին բացուած անդունդը. նժոյգը կանգ առաւ, աչքերը վառւում էին և մէջքն ու ռունգները խաղում… Անգիլն իջաւ նրա վրայ և օդի մէջ տատանւում էր նրա ամպրոպը…

Այսպէս ծնուեց Անգիլը…

—

Եւ նա մենակ, իր ձիու վրայ՝ անցնում է դաշտերով. ջինջ լեռնալանջի վրայ, լեռների եռեւում տրոփում են ձիու սմբակները և փոշոտ ճամբի եզրին, բարակ թմբի վրայով շտապում է նա առաջ…

Ու նա դաշտերի պահապանն է, երկրի բախտաւորութիւնը և իր ձիու խրխինջը ուրախ ծիծաղի նման փռւում է ճամբի վերջին խեղճ, աղքատ գիւղի վրայ…

Սէյրի

գրկել էր տակաւին պատանութեան օրերից։

Բայց վերջ ի վերջոյ չմնաց նա պայքարի ճամբին, չմնաց նա այն վտանգաւոր վայրերում, ուր շատ անգամ յաղթանակներ էր տարել...

Այլ Բագուի մի հիւանդանոցի պատերի մէջ փակուեցին ընդմիշտ հերոսի աչքերը...

Նա մնաց իր քաղաքական պարտքը լիովին կատարած, հոգին համարձակ մարդկութեան առջև, հայրենիքի առջև, որոնց նուիրաբերել էր նա իր կամքը, իր հերոսութիւնը և իր կեանքը...

X.

ԳԱՂԹԱԿԱՆՆԵՐԻ ՀԱՄԱՐ

Այսօր Հայկական գաղութում բացւում է գաղթականների համար հիւանդանոցը և գաղթականական գըլխաւոր կոմիտէն այդ առթիւ յայտարարում է տեղական լրագիրներում։

Նա դրանով նպատակ ունի հասարակութեան ուշադրութիւնը դարձնել Հայկական գաղութում կենտրոնացած թէ հիւանդանոցի և թէ գաղթականական բոլոր հաստատութիւնների վրայ։

Այնտեղ կենտրոնացած են. որբանոցները, ճաշարանը, գաղթականական բնակարանները և այսօր աւելանում է յատուկ հիւանդանոցը։

Գաղթականական կոմիտէի անկեղծ ցանկութիւնն է, որ այսօր հասարակութիւնն առիթ ունենալով հիւանդանոցի բացումը՝ հնարաւորութիւն ունենայ մօտիկից դիտելու և ծանօթանալու այն բոլորի հետ, ինչ որ արուած է մինչև այժմ գաղթականների համար և մանաւանդ այն բոլորի հետ, ինչ որ արուած չէ...

Եւ, յիրաւի, արժէ, որ հայ հասարակութիւնն իր սովորական անտարբերութիւնը թողնի և իր քաղաքացիական ու մարդկային պարտականութիւնը կատարելու գործում լրջութիւն մտցնի։

Եթէ ոչ՝ շատ ծանր մտահոգութիւնների առիթ պիտի տայ ուրբաթ օրուայ կայացած Թաղային խորհուրդների կիսաժողովը։

Ասում եմ կիսաժողով, որովհետև Թաղային ներկայացուցիչների հազիւ թէ կէս մասն էր ներկայ այդ խորհրդակցութեանը։

Իսկ ներկայ եղողներն էլ կրկնում էին այն, ինչ որ մինչև այդ օր բոլորին յայտնի էր.

— Փող ժողովողները շատ սառնութեամբ են կպչում գործին, իսկ հասարակութիւնը շատ տհաճութեամբ է ձեռքը իր գրպանը տանում և գրպանն էլ տանելիս՝ տալիս է անհամեմատ քիչ, քան թէ նա կարող է և պարտաւոր է տալ։

Գործը համեմատաբար լաւ է կազմակերպուած բանուորական շրջաններում՝ նաւթահանքերում, իսկ մեր քաղաքի միջին դասակարգի բազմաթիւ անդամները, մեր ամբողջ մէշչանական դասը վերին աստիճանի անտարբեր է դէպի գաղթականական ծայր կարիքները։

Այս դէպքում, երևի, նրանք որոշել են մրցել մեր խոշոր հարուստների հետ դափնիներ կորզել նրանցից...

Մարդ գլուխ է կոտրում՝ պարզելու, թէ էլ ինչը կարող է ցնցել, շարժել մեր հայ հասարակութիւնը, եթէ նա անցնցուելի է նոյն իսկ այնպիսի աղէտների առաջ, որոնք սկսուել են մի տարուց աւելի և շարունակւում են մինչև այսօր՝ արիւնով ողողելով և դիակներով ծածկելով Վասպուրականի և Արարատեան դաշտերը։

Բայց պէտք է վերջ տալ այդ յանցաւոր վերաբերմունքին, պէտք է այսօր հասարակութիւնը գայ, իր աչքով տեսնի այն, ինչ որ արւում է նրա անունից և ինչ որ արուելու է վաղը դարձեալ նրա անունից։

Չպէտք է մոռանալ, որ մենք պահում ենք որբանոց, որը այս տարի պահանջում է 40,000 ր., չպէտք է մոռանալ, որ գաղթականների վրայ այժմ ծախսւում է օրական 150—200 ր., իսկ վաղը, ցրտերն սկսուելուց, նրանց պէտք է տալ և՛ վառելիք, և՛ հագուստ՝ իրենց մերկութիւնը ծածկելու և մարմինները տաքացնելու համար...

Ռ. Յովհանջանեան

ՊԱՏԵՐԱԶՄԸ

ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

„ԱՐԵՒ"-Ի ՀԵՌԱԳԻՐՆԵՐԸ

Իգդիր. 26 սեպտեմբերի

Իգդիրի շրջանի գաղթականները թափուած են բաց երկնքի տակ՝ առանց անկողնի և տաք հագուստի։ Գիշերները եղանակը յանկարծ ցրտում է։ Ցրտից բազմաթիւ գաղթականներ հիւանդացել են։ Նոյնիսկ համեմատաբար առողջներին ոչնչանալու վտանգ է սպառնում։ Անհրաժեշտ է վերմակների, տաք հագուստի և ուտեստի շուտափոյթ օգնութիւն։ Նուիրատուութիւնները կարելի է ուղարկել Իգդիրի Եղբայրական Օգնութեան կոմիտէին—բժիշկ Ալանեանի անունով։

Վարդգէս, Քաջազնունի, բժ. Սաղեան, Միքայէլ Վարանդեան, Ստեփան Տէր-Մկրտչեան, Շուշանիկ Տէր-Գրիգորեան, բժ. Ալանեան, Ստեփանեան քահանայ, Նիկողայոս Աղբալեան։

(Պետ. Հեռ. Գործ.)

ՌՈՒՍ-ԹԻՒՐՔԱԿԱՆ

Բարձրագոյն Հրամանատարի շտաբից

(Պաշտօնական)

ԿՈՎԿԱՍԵԱՆ ՃԱԿԱՏ

Միրձ-ծովեան շրջանում, Խօպից և Թօրթումից հարաւ-արևելք, Արկինա—Իշխան ճակատի շրջանում առաջաւոր մասերի մէջ ընդհարումներ են։

Մանազկերտից հիւսիս-արևմուտք, Դուզ-գեօլ լճի մօտ մեր հեծեալները յաջող կռուով դիրքերից դուրս արին հարիւրաւոր քիւրդ զինուորների։ Մեր զօրամասերն Ալաշգերտի շրջանում, Մանազկերտից արևելք քիւրդերին դիրքերից դուրս անելով հասան Սիփան դաղի ստորոտներին, որ սահմանափակւում է Վանայ լճի հիւսիսային ափը։

Միւս ճակատի վրայ լուրջ ընդհարումներ չեն եղել։

ՌՈՒՍ-ԳԵՐՄԱՆ ԱՒՍՏՐԻԱԿԱՆ

Բարձրագոյն Հրամանատարի շտաբից

(Պաշտօնական)

ԱՐԵՒՄՏԵԱՆ ՃԱԿԱՏ

Ռիգայի շրջանում մերոնց կրակը գերմանական դիրքերին մեծ վնասներ տալով նրանց լռութեան դատապարտեց։

Դվինսկի տակ կռիւները դեռ չեն վերջացել։ Գերմանացիներն ուժեղ ռմբակոծութիւնից յետոյ մի քանի յամառ գրոհներ տուին Պօնևեժա երկաթուղու հարաւային մասերի վրայ։ Գերմանացիների գրոհը Գարգունովկա գիւղի և նրա մօտի բարձունքների վրայ յետ տուինք։ Թշնամին հաւաքած ուժերով նորից գրոհ տուեց և գրաւեց մեր դիրքերի մի մասը։

Միևնոյն ժամանակ մեզ յաջողուեց Գարբունովկայից հիւսիս-արևմուտք թշնամուն դուրս անել Սպրուգին գիւղի դիրքերից։

Դվինսկի խճուղու շրջանում, Դվինսկից հարաւ-արևմուտք ընդհարումներ են։ Երկու կողմից Դվինսկի շրջանում հրետանու կրակը լարուածութեան է հասնում։

Օրօլէ լճի շրջանում, Դրիսվիատիցա գետի կամուրջների մօտ և Սմորգոնի, Կրեւօի շրջաններում կռիւների լարուածութիւնը չի թուլանում։ Շատ տեղերում կռիւները ձգձգուող բնոյթ են ստանում։ Մեզ համար համեմատաբար յաջող էին Սպօզլիցա գետի արևմտեան ափին, Սեմէնկա, Նէֆէդա գիւղերի շրջանում, Վիշնեւկից հարաւ եղած կռիւները։

Պրիպետի վրայ, Նէվելի կամուրջների շրջանում, Պինսկից հարաւ-արևմուտք թշնամին շարժուեց դէպի արևելք և գրաւեց Կօմօրա գիւղը։

Չէրտօրիի հիւսիս-արևմտեան շրջանում, Գուտվինով գիւղի շրջանում տաք սուինամարտ է։ Այդ գիւղը ձեռքից-ձեռք է անցնում։

Լիսովի վրայ թշնամու յարձակումները կասեցրինք։

Զարտերիի հարաւային շրջանում մեր զօրքերը, առանց ուշադրութիւն դարձնելու թշնամու հրետանու փոթորկոտ կրակին ու բազմաթիւ հակա-յարձակումներին՝ գրաւեցին Մլաչևի, Բօլշօյ Ստասիգարժի դիրքերն ու Չերնիժ գիւղը։ Ռազմամթերքով բարձած գնացքը յաջող կերպով օգնութեան հասաւ։ Ստաւեցի և Կլևանի հիւսիս-արևմտեան մասի դէմ գրոհ տալու ժամանակ։ Այդ կռիւներում վերցրինք մօտ 1,800 գերիներ՝ սպաներով և գնդացիրներով։

Մեզ համար յաջող կռիւներում, Գալպուտի շրջանում, Լուբնի և Լուցկի միջև գերեցինք մօտ 1,500 զինուոր, 19 սպայ, խլեցինք 5 գնդացիր և պրօժեկտորը։

Իկվայի ձախ ափին երէկ սուինամարտից յետոյ Կրէմենցից հիւսիս-արևելք գրաւեցինք Սօպունով գիւղը, վերցրինք 3 սպայ, 256 զինուոր, 3 ռմբաձիգ։ Դրան հետևող հակա-յարձակումը յետ մղեցինք։ Մենք գրաւեցինք Սեմիկովից գիւղը, որ գտնւում է Տարնօպօլից հարաւ-արևմուտք։ Բուչաչի արևելեան շրջանի յարձակումների ժամանակ գերեցինք 11 սպայ, 300-ից աւել զինուոր։

Բալտիկ ծովում անգլիական սուզանաւը Հերսինեան ափերի մօտ հրետանիով ոչնչացրեց գերմանական փոխադրական կայանը։

ԴԱՐԴԱՆԵԼՈՒՄ

ԼՈՆԴՈՆ. Սեպտ. 24-ին.—Ռէյտերի գործակալութիւնը հաղորդում է, որ դիւանագիտական շրջաններից ստացուած լուրերի համաձայն՝ սերբիական սահմաններում կենտրոնացած աւստրո-գերմանական զօրքերի թիւը հասնում է 400,000-ի։

Պաշտօնապէս հաղորդում են, որ Սուվլիի մօտ եղած այս ամսուայ բոլոր կռիւները չնչին են։ Ամեն գիշեր առաջաւոր մասերի միջև ընդհարումներ են լինում։ Ցարձակումները երբեմն տարւում են տների վրայ թափուող ռումբերով։ Այդ գործողութիւնների արդիւնքն այն եղաւ, որ Սուվլիի ճակատի երկայնքով առաջ անցանք մօտ 300 եարդ տարածութիւն։

Լլօյդի գործակալութիւնը հաղորդում է, որ Էլէրման ընկերութեան «Արաբիան» շոգենաւը խորտակուած է։

ՖՐԱՆՍ-ԳԵՐՄԱՆԱԿԱՆ

(Պաշտօնական)

ՊԱՐԻԶ. 25 սեպտ.—Արրասից հիւսիս գիշերուայ ընթացքում շարունակուեց հրետանու հրաձգութիւնը Սուշէի շրջակայքի ուղղութեամբ, Լաֆօլի 140 բարձրութեան հողամասերում։ Թշնամու հրետանին բաւականին մեծ գործունէութիւն ցուցահանեց Ռուայի շրջանում, Լէնից հիւսիս, Տրանսիլվայի ուղղութեամբ և Սենմերտեան անտառներում։ Մեր հրետանին եռանդուն կերպով պատասխանում էր նրանց։

Շամպանիայում գերմանացիները կատաղի հրաձգութեան ենթարկեցին մեր դիրքերը Սեննիլերի ու Սեննօնի, նոյնպէս և Սոմմերի միջև։ Մեր մարտկոցներն ամենուրեք եռանդուն կերպով պատասխանում են թշնամուն։ Ուժեղ կռիւներ են Տագիւրից հարաւ, Մենվիլի մօտի դիրքերն Արգօնների բարձունքների հետ միացնող խրամատներում։ Ականներով մենք ոչնչացրինք Մալսապանի անտառը և թշնամու պահեստները։

Միւս ճակատների վրայ համեմատաբար խաղաղ անցաւ։

ՊԱՐԻԶ. 24 սեպտ.—Նիւպօրի շրջակայքում, Գէտգասի և Սարէնտէտէի հողամասերում հրետանու ուժեղ հրաձգութիւն է։ Հրետանու կռիւ է նաև Արտուայում։ Տելիւսից հարաւ, Արրասի ու Լիլլի մօտ մենք քիչ առաջ շարժուեցինք։ Պօպինկուրի մօտ, Ռուայից հարաւ մեր դուրս ընկած դիրքերից մէկի վրայ թշնամու գրոհ տալու փորձերն ապարդիւն անցան։ Էն գետի վրայ մեր մարտկոցների կրակով Ժիւվէնկուրի մօտ թշնամու դիրքերում պայթիւն առաջացրինք. բացի այդ՝ հրդեհեցինք նաև Գինկուր կայարանը։

Շամպանիայում գերմանացիները գիշերուայ ընթացքում երկու հակայարձակում գործեցին մեր Նաւարինեան դիրքերի դէմ, երկուսն էլ յետ տուինք՝ թշնամուն լուրջ կորուստներ տալով։ Ռումբերով կռիւ է Արգօններում, Ֆիլմօրտի մօտ և Գիրշկօշէում։ Լօթարինգիայի մի քանի կէտերում թշնամին հրետանու ուժեղ կրակը դեռ շարունակում է առանձնապէս Արաքուրի և Բիւրի մօտերքում, Ռէլօնից հիւսիս, նոյնպէս և Բագօնվիլլէի հիւսիս-արևմտեան մասերում։ Մենք հրացանով յաջող պատասխան ենք տալիս թշնամուն։ Վօգէզներում գերմանացոց զօրեղ հետախոյզները, որոնք մտադիր էին գրոհ տալ Զանեգէրնախից 6 մղոն հեռու գտնուող մեր զօրամասի վրայ, մեր կրակին ենթարկուեցին։ Մեր գնդացիրներից մէկն ռմբակոծեց գերմանացոց օդապարիկը, որ այրուելով ընկաւ թշնամու գծի մօտ։

ԳԵՐՄԱՆՕ-ԲԵԼԳԻԱԿԱՆ

ՀԱՒՐ. Սեպտ. 24-ին. — Թշնամին շարունակում էր անընդհատ ռմբակոծել մեր առաջաւոր խրամատները Նէյնօրդից հարաւ, Օրվինսկէի, Օստկերկէի մօտ, նոյնպէս և Նօրդշօտէից հարաւ, Դիքսմիւդի մօտ։ Այդ գործողութիւններին հետևակ զօրքը չէր մասնակցում։

ԻՏԱԼՕ-ԱՒՍՏՐԻԱԿԱՆ

ՀՌՈՄ. Սեպտեմբերի 24-ին.—Գըլխաւոր բանակից հաղորդում են, որ Արսիերօից հիւսիս-արևմուտք մեր զօրքերի եռանդուն գործունէութեամբ 20-ի, 22-ի և 23-ի ընթացքում մի շարք բաւականին նշանաւոր ընդհարումներ եղան Մօնտէ-Մարօնիա—Բօկկատրիվալլէ—Աստիկօ և Դիւրերի հարաւային ճակատների վրայ։ Մեր զօրքերն ամենուրեք հրետանու պաշտպանութեան գերակշռութիւնն իրենց կողմն էին պահում։ Ձեյլա հովտում թշնամին ջարդուելով մանր խմբերով աշխատեց անցնել Իզբիավէէի և գետի հարաւային բարձրութեան միջով, սակայն զգալի կորուստներով յետ մղեցինք նրան, բաց որում մենք գերեցինք 1 սպայ, 10 զինուոր։ 23-ի առաւօտեան թշնամին Կարսօի վրայ կատաղի կրակով Մօնտէ-Սան-Միքէլէի շրջանում մեր ձախ թևին անհանգստացրեց։ Մեր հետևակների մի խումբ իր դիրքերից դուրս գալով լեռնաշըղթայի լանջերի վրայ, որոնք իջնում են Սանդիկէլէ-Պէտէանօ ուղղութեամբ, գրոհ տուեց թշնամու զօրքերի վրայ, որը գերիներ թողնելով փախուստի դիմեց։

ՍԵՐԲ-ԱՒՍՏՐԻԱԿԱՆ

ՆԻՇ. Սեպտ. 24-ին.—Ամսիս 20-ին Սավի ճակատի վրայ սերբիական հրետանին դէպի Բէժանի բարձունքները եկող թշնամուն սաստիկ յետ քշեց։ Նոյն ճակատի վրայ սերբիական մարտկոցներն ռմբակոծեցին Ցեմլէնակովլի ուղղութեամբ դասաւորուած աւստրիական հրետանին ու այլերը։ 21-ին Դունայի ճակատի վրայ թշնամին դաշտային թնդանօթներից 60 գնդակ արձակեց սերբիական դիրքերի վրայ, բայց անհետևանք։ 20 սաւառնակներ թըռչելով Ներքին Մօրաւայի ու Մլաւայի վրայ՝ 33 ռումբ ձգեցին, սակայն զոհեր չեղան։ Թշնամու սաւառնակներից մէկը—տաուբէ տիպի—Չէյչար-Կնեաժեւացի կողմից մտնելով երևաց Նիշի վրայ, ապա արևելեան ուղղութիւն բռնելով՝ թռաւ դէպի բուլղարական սահմանները։ Սերբիական հրետանին Սաւայի վրայ ռմբակոծեց թշնամու դիրքերը Եակովից հիւսիս-արևմուտք։

Լոյս 22-ի գիշերը թշնամու գնդացիրները կրակ բացեցին Բելգրադի ամրոցների վրայ, սակայն առանց հետևանքի։ Սերբերը Սաւայի ճակատին թշնամուն խանգարեցին Բանովօ-Բօրդոի մօտ գետն անցնել։

ԱՐՏԱՔԻՆ

ՅՈՒՆԱՍՏԱՆ

ԱԹԷՆՔ. Սեպտ. 24-ին.—«Նէադէլլաս» թերթը գերմանական սպաների ներկայութեան մասին Բուլղարիայի բացասական պատասխան տալու առթիւ խօսելով՝ ասում է. «Պօզնանից Բուլղարիա խփած անթել հեռագիրը հաղորդում է, որ ամսիս 13-ին գերմանական սպաներ գնացին Բուլղարիա։ Այդ հեռագիրը բռնել է յունական «Կէնթրօն» յածանաւի անթել հեռագրի մեքենան, հաւանօրէն բռնել են նաև անգլիական ռազմանաւի մեքենաները։ Այդպիսով բուլղարական կառավարութիւնը բացասում է նոյն իսկ փաստը»։

ՍԱԼՕՆԻԿ. Սեպտ. 22-ին. (Ուշացած).—Ափ իջած ֆրանսիական զօրքերը քայլերգով անցան Թագաւորազն Անդրէյի առաջով, որ Մակեդոնիայի հեծելազօրքի հրամանատար է կարգուած։

ԱԹԷՆՔ. Սեպտ. 24-ին.—Զայիմիսի կաբինէտի քաղաքականութիւնը հաւանօրէն կողմնակից կը լինի զինուած չէզոքութեան քաղաքականութեան։ Հաւաստիացնում են, որ Զայիմիսը աշխատում է գրաւել Վենիզելոսականների վստահութիւնը, որպէսզի այդպիսով ապահովի նոր մինիստրութեան հեղինակութիւնը, որ անհրաժեշտ է ժամանակակից խնդիրների լուծման համար։

ԱԹԷՆՔ. Սեպտ. 25-ին.—Նախկին մինիստրներից 5-ը, Գունարիս, Տիւտօկիս, Ռալլիս, Դրագումիս և Զաիմիս մտան նոր կաբինէտի կազմի մէջ։ Այսօր ցերեկուայ ժամը 5-ին երդուեցին ամենքին։ Պորտֆէլներն այսպէս են բաժանել. արտաքին գործոց մինիստր-նախագահ է Զայիմը, ֆինանսների մինիստր՝ Դրագումիս, արդարադատութեան և ճանապարհների հաղորդակցութեան—Ռալլիս, ժողովրդական լուսաւորութեան՝ Տիւտօկիս, ներքին գործոց՝ Գունարիս, ծովային վարչութեան՝ Կունտուրիօտի, զինուորական՝ գեներալ Աննակիտապաս։

ԲՈՒԼՂԱՐԻԱ

ՍՕՖԻԱ. Սեպտ. 23-ին.—Տեղիս հոլանդական դեսպանին է յանձնուած ռուսների, ֆրանսիացիների, անգլիացիների, իտալացիների, բելգիացիների և սերբերի շահերի պաշտպանութիւնը։

ՍՕՖԻԱ. Սեպտ. 23-ին.—Այսօր Մուստաֆա-Փաշան—Դէդէ-Աղաչ երկաթուղագիծը բուլղարներին յանձնուեց։ Շուտով կըսկսուի այդ գծով բուլղարական գնացքների երթևեկութիւնը։

ՍՕՖԻԱ. Սեպտ. 25-ին.—Համաձայնութեան պետութիւնների ներկայացուցիչները երեկոյեան յատուկ գնացքով քաղաքից դուրս եկան։ Ռուսները ճանապարհուեցին Ռուշչուկ, միւսները՝ Դէդէ-Աղաչ։ Կայարանում նրանց ճանապարհում էին արտաքին գործոց մինիստրութեան ընդհանուր քարտուղարը, պետութեան կողմից՝ երկու սպաներ, որոնք դեսպանների հետ կը գնան մինչև Դէդէ-Աղաչ և Ռուշչուկ։ Ուղևորուելուց առաջ անգլիական ու ֆրանսիական դեսպաններն ունկնդրութիւն ունեցան Ֆերդինանդի մօտ։

ՉԻՆԱՍՏԱՆ

ՊԵԿԻՆ. Սեպտ. 24-ին.—Պետական խորհուրդն ընդունեց և Նախագահին տուեց հաստատելու գաւառական խորհրդի այն որոշման հետևանքը, թէ Չինաստանի համար պետական ինչ ձև է հարկաւոր՝ միապետական, թէ հանրապետական։

ՇՈՒԷԴԻԱ

ՍՏՕԿՀՕԼՄ. Սեպտեմբերի 20-ին.—Տեղիս գերմանական դեսպանութիւնը յայտարարեց, որ արտասահմանում եղած բոլոր 19 տարեկան գերմանացիները, որոնք ընդունակ կարող են լինել զինուորական ծառայութեան համար, անյապաղ գնան Գերմանիա։

Տեղիս մեծ-բրիտանական դեսպանը շուէդական թագաւորին տուեց անգլիական կառավարութեան առաջարկութիւնը՝ անգլօ-շուէդական բանակցութիւնների վերսկսման մասին։

ԱՆԳԼԻԱ

ԼՈՆԴՈՆ. Սեպտեմբ. 24-ին.—Երէկ առաւօտեան զինուորական խորհուրդ կայացաւ, որին ներկայ էին Ասկուիթ, Գրէյ, Կիտչեներ, Լլօյդ-Ջորջ, Բալֆուր, Լենստօուն, Բօնարլօու, Չերչիլ։ Խորհրդակցութիւնը երկար տևեց։ Այնուհետև ցերեկուայ ընթացքում ուրիշ խորհրդակցութիւն կայացաւ, որին ներկայ էր ֆրանսիական բանակի ներկայացուցիչը։

ԻՏԱԼԻԱ

ՀՌՈՄ. Սեպտեմբերի 24-ին.—Արտաքին գործոց մինիստրը անցագիրը յանձնեց տեղիս բուլղարական դեսպանին։

ՀՌՈՄ. Սեպտեմբերի 24 ին.—Հաւաստի աղբիւրներից հաղորդում են, որ Սօֆիայի իտալական դեսպանը լիազօրուել է հեռանել Համաձայնութեան պետութիւնների դեսպանների հետ։ Բուլղարական դեսպանախորհրդին յանձնուած են անցագրերը և ենթադրում են, որ նրանք շուտով Իտալիան կը թողնեն։

Քաղաքական կուսակցութիւնները մեծ ցոյց են կազմակերպում ի պատիւ Սերբիայի։

Թերթերը կատարեալ ատելութիւն են արտայայտում դէպի Ֆերդինանդ թագաւորը։

ԼՐԱՏՈՒ

ԲԱԳՈՒ

◆ Գաղթականների հիւանդանոցի բացումը. — Այսօր, կիրակի, ամսի 27-ին, ցերեկուայ ժամը 1-ին, նշանակուած է Հայկական գաղութի գաղթականների համար պատրաստուած հիւանդանոցի հանդիսաւոր բացումը։ Հիւանդանոցը գտնւում է 6-րդ Պերեվալնայա և 4-րդ Նագօրնայա փողոցների անկիւնում։

◆ Հոգեհանգիստներ.—Այսօր, ամսի 27-ին, հանգուցեալ Բ. Դօլուխանեանի և Նիկօլ-Դումանի մահուան տարելիցի պատարագից յետոյ հոգեհանգիստ է կատարուելու հայոց նոր եկեղեցում։

◆ Փ. Յ. Սկրէպինսկու վերադարձը.—Մոսկուայից երէկ վերադարձաւ քաղաքային դումայի իրաւասու Փ. Յ. Սկրէպինսկին, որին դումայի կողմից յանձնարարուած էր բանակցութիւններ վարել Մոսկուայի դրամատէրերի հետ՝ Բագու-Շօլլարեան ջրանցքի աւարտման համար 9 միլիոնի լրացուցիչ փոխատուութեան մասին։ Պ. Սկրէպինսկու ասելով՝ Մոսկուայի դրամատէրերը մեծ պատրաստակամութիւն են յայտնում ընդառաջ գնալու Բագուին։ Երէկ նա փոխատուութեան պայմանների մասին խորհրդակցութիւն ունէր քաղաքագլխի հետ։

◆ Ծնողական ժողովներ.—Այսօր, կիրակի, սեպտեմբերի 27-ին, նշանակուած են ծնողական ընդհանուր ժողովներ հետևեալ միջնակարգ դպրոցներում. ցերեկուայ ժամը 11-ին՝ ռէալական դպրոցում, ժամը 11 և կէսին՝ տղայոց երկրորդ գիմնազիայում և ժամը 12-ին՝ տղայոց առաջին Ալէքսանդր երրորդի գիմնազիայում։ Այդ ժողովների գլխաւոր առարկաներն են. ընթացիկ ուսումնական տարուայ ծնողական խմբակցութիւնների խորհուրդների գործունէութեան հաստատումը, լիազօրներ, դասարանների և մանկավարժական խորհուրդների ներկայացուցիչներ և ծնողական խորհրդի ու վերստուգիչ մասնաժողովի անդամների ընտրութիւնը։

◆ Դրամարկղի անդամների ընդհանուր ժողովը.—Այսօր, երեկոյեան ժամը 7 և կէսին, առևտրական դպրոցի դահլիճում նշանակուած է նաւթարդիւնաբերողների խորհրդի ծառայողների փոխատու-խնայողական դրամարկղի անդամների ընդհանուր ժողովը, որ զբաղուելու է վերստուգիչ մասնաժողովի անդամների ընտրութեամբ, ընթացիկ հարցերով և անդամների համար արժան գնով կենսամթերքներ գնելու հարցով։

◆ Տնտեսական ընկերութեան ընդհանուր ժողովը.—Այսօր, երեկոյեան ժամը 7-ին, քաղաքային դումայի մեծ դահլիճում նշանակուած է Բագուի տնտեսական ընկերութեան (պաշտօնեաների սպառողական խանութի) անդամների ընդհանուր ժողովը՝ քննե-

լու խանութի վերաբերեալ մի շարք հարցեր։

◆ Մանր դրամի կարիք.—Ի նկատի ունենալով, որ քաղաքային վարչութեան մէջ բանուորներին ու պահեստների կանանց փող բաժանելիս շաբաթական մօտ 2.500 ր. արծաթ և պղինձ սև փող է հարկաւոր լինում, իսկ այդքան մանր փող չի լինում դրամարկղում, քաղաքագլուխը դիմել է Պետական բանկի տեղիս բաժանմունքին՝ խնդրելով շաբաթական այդ կարիքների համար 2000 ր. թուղթ փող մանրացնել։

ՆՈՒԻՐԱՏՈՒԹԻՒՆՆԵՐ

Խմբագրութիւնս ստացել է հետեւեալ նուիրատուութիւնները.

Հայ կամաւորների օգտին

«Կասպեան ընկ.» Բիբի-Հէյբաթի ծառայողներից, Հ. Մ. Առստամեանի միջոցով—34 ր.։

«Կասպեան ընկ.» Նաւթահանքի աշխատաւորներից, Դր. Աղաջանեանի յիշատակին, պսակի փոխարէն—6 ր.։

«Մանթաշեանի» № № 58 և 26 հանքամասերի բանուորներից ու ծառայողներից 27 ր. 04 կ.։

«Արամազդի» Բալախանու № 76 հանքամասի բանուորներից ու ծառայողներից՝ Հ. Մարտիրոսեանի միջոցով 11 ր. 14 կ.։

«Մանթաշեանի» Տերենտեւ և № 18 հանքամասերի բանուորներից ու ծառայողներից օգոստոսի վճարը 18 ր.։

„Тов. по Бурен."-ի բանուորներից, արհեստաւորներից ու ծառայողներից օգոստոսի վճարը 10 ր. 02 կ.։

Դր. Կարապետեանից 1 ր. 50 կ.։

«Մանթաշեանի» Զաբրատի բանուորներից, ծառայողներից ու արհեստաւորներից օգոստոսի վճարը 42 ր. 18 կ.։

«Մանթաշեանի» Ռամանու № № 58 և 26 հանքամասերի ծառայողներից ու բանուորներից 65 ր.։

Դր. Նազարեանի տանը ճաշկերոյթի ժամանակ հանգանակուած 14 ր. 40 կ.։

Վարդան Վրդանէսեանից 3 ր.։

Այսօր ստացուել է 232 ր. 28 կ., նախկին ստացուածների հետ միասին ընդամէնը 7,267 ր. 19 կ.։

Հայ գաղթականների օգտին

Գար. Տէր-Մակարեանի միջոցով իր ընկերների շրջանում հանգանակուած 36 ր.։

«Մանթաշեանի» 58 և 26 հանքամասերի ծառայողներից ու բանուորներից 27 ր. 04 կ.։

Կ. Իսկանդարեանի դուստր Արմէնուհու յիշատակին գաղթական որբերի համար 25 ր.։

Զաւմշուդ Տէր-Գրիգորեանից 3 ր.։

«Փիթօևի» № 50 հանքամասում Դարեգինի, Գասպարի, Շաքրօի, Մկրտիչի, Սահակի և Ներսէսի միջոցով տրուած երեկոյթի արդիւնքը 47 ր. 51 կ.։

Յովհաննէս Ասրիեանից, (Բալախանի) Ս. Խաչի մատաղի փոխարէն գաղթականական որբերի օգտին 10 ր.։

«Արևմէգ» ընկ. բանուորներից, ծառայողներից և արհեստաւորներից, օգոստոսի վճարը, Ալ. Գալստեանի միջոցով 21 ր. 47 կ.։

Նիկոլայ Օհանեսեանի միջոցով (Կոկանդ) Թևան Գաբրիէլեանի տանը հանգանակուած 10 ր.։

«Օլէում» ընկ. Խուրդալան հանքամասի ծառայողներից և բանուորներից օգոստոսի վճարը 17 ր. 01 կ.։

Հայկ Խաչատրեանից 10 ր.։

«Մանթաշեանի» Տրուբեցկոյ, № № 48, 11 և 13 հանքամասերի բանուորներից 18 ր. 50 կ.։

Յ. Ղարագուլեանի միջոցով, Ս. Դարաղեանի որդու մկրտութեան ժամանակ հանգանակուած 15 ր.։

«Руно»-ի Բալախանու ծառայող Գ. Ալլահավերդեանի որդի Ռուբէնի մկրտութեան ժամանակ հանգան. 13 ր. 50 կ.։

«Бакинск. Лѣсопром. Т-во»-ից գաղթականական որբանոցում մի ամսական պահելու վճարը 180 ր.։

Վարդան Վրդանէսեանից 5 ր.։

Վարդանեանից 10 ր.։

Գ. Թորոսեանի միջոցով մի խումբ պարոններից հանգանակուած 40 ր.։

Ս. Դաւթեանից 15 ր.։

Այսօր ստացուել է 504 ր. 03 կ.։

Նախկին ստացուածների հետ միասին ընդամէնը 13,134 ր. 64 կ.։

ԳԱՂԹԱԿԱՆԱԿԱՆ ԳՈՐԾԸ

Բագուի հայ գաղթականական յանձնաժողովն ստացել է Սօֆիա Մաղախեան Արուչեանի յիշատակին պսակի փոխարէն տիկ. Բուդաղեանի միջոցով Բաղդասար Արուչեանից 180 ր., բժ. Ստեփան Բուդաղեանից 30 ր., բժ. Բաղդասար Տրապիզոնց. 30 ր., Աւագ Արուչեանից 10 ր., տիկ. Եղիսաբէթ Բուդաղեանից 180 ր., Եղբ. Արուչեաններից 50 ր., Ներսէս Պօղոսեանից 15 ր., ամուսիններ Ղուլիջեաններից 10 ր., Սարգիս Իսկրաչեանից 10 ր., Աննա Բախտամեանից 5 ր., Եղիսաբէթ Սափարեանից 20 ր., Շողակաթ Աստուածատրեանից 25 ր., Եղբ. Բուդաղեաններից՝ Լեւոն, խորէն, Արսէն 180 ր., ամուսիններ Բուդաղեաններից 25 ր., Մարիամ Բուդաղեանից 25 ռուբ., Մովսէս Կալաս. Բուդաղեանից 500 ր.։ Ընդամէնը 1295 րուբլի։

ԹԻՖԼԻՍ

◆ Կովկասի Փոխարքայ Մեծ Իշխ. Նիկոլայ Նիկոլայեւիչի ժամանման առիթով Թիֆլիսի բոլոր դպրոցների աշակերտներն արձակուած են մինչև առաջիկայ երկուշաբթի։

◆ Քաղաքագլուխ Ա. Խատիսեանը Պետական Դումայի անդամ Պապաջանեանից և Աջէմեանից ստացել է հետեւեալ հեռագիրը.

«Տեղեկացինք Լազարեւի հետ։ Համաձայն Բարձրագոյն հրամանի, լուսաւորութեան մինիստրութիւնը մշակում է Թիֆլիսի պոլիտեխնիկումի նախագիծը։ Եթէ Փոխարքան խնդրի պոլիտեխնիկումի փոխադրութիւնը Թիֆլիս, միաժամանակ առաջարկելով պոլիտեխնիկումի համար Թիֆլիսի նշանակած գումարը, այդ դէպքում քաղաքի պատգամաւորութիւնը կարող է գալ և յուսալ, որ յաջողութիւն կը գտնի։ Մանրամասնութիւնները նամակով»։

◆ Քաղաքագլուխ Ա. Խատիսեանը պոլիտեխնիկումի փոխադրութեան առիթով ստացել է տնտեսագէտ Տօտոմեանից մի հեռագիր հետեւեալ բովանդակութեամբ.

«Ամալիցկին համաձայն է Վարշաւայի պոլիտեխնիկումը Թիֆլիս փոխադրելուն։ Անհրաժեշտ է պատգամաւորութիւն ուղարկել Պետրօգրադ»։

Ամալիցկին, որի մասին յիշատակւում է հեռագրում, Վարշաւայի պոլիտեխնիկումի դիրեկտորն է։

◆ Ինչպէս յայտնի է, Ի. Ա. Մանթաշեանը 25,000 ր. է նուիրել յօգուտ հայ գաղթականների։ Այդ գումարը փոխադրուած է քաղաքագլուխ Խատիսեանին. քաղաքագլուխը ենթադրում է, որ աւելի նպատակայարմար կը լինի, եթէ այդ գումարով գաղթականների համար գնուեն ձմեռուայ տաք հագուստներ. իսկ ինչ վերաբերում է բժշկական օգնութեան և ապրուստին, առաջինը հոգում է քաղաքների միութիւնը, իսկ երկրորդը՝ պատերազմից վնասուածների Կովկասեան կենտրոնական կոմիտէն։

◆ Թիֆլիսի բրիտանական հիւպատոսը քաղաքագլուխ Խատիսեանին ուղարկեց՝ Լօնդօնի հայերից ստացուած 2,878 ր., խնդրելով, որ այդ գումարն ուղարկուի Վան՝ ամերիկական միսիոնար մասըր Եարրօյին, հայ կարօտեալների օգտին։

◆ Սեպտեմբերի 23-ին № 40 հիւանդանոց են մտել. սկարլատ.—1, դիֆտեր.—3, բծաւոր տիֆ.—2, որովայնային տիֆ.—5, կրկնուող տիֆ.—1, խօլերայով—1. առողջացել են. դիֆտ.—4, բծաւոր տիֆ.—2, խօլերայով—2. Մնում են հիւանդանոցում. սկարլատ.—50, դիֆտ.—23, ծաղկով—1, բծաւոր տիֆ.—39, որովայնային տիֆ.—26, կրկնուող տիֆ.—4, դիզինտ.—1, խօլերայով 132։

ՌՈՒՍԱՍՏԱՆ

ՆԵՐՔԻՆ ԳՈՐԾՈՑ ՄԻՆԻՍՏՐՈՒԹԵԱՆ ՆԱԽԱՀԱՇԻՒԸ

Պետական Դումա է մտցրուած ներքին գործոց մինիստրութեան նախահաշիւը, ուր եկամուտ նախատեսնուած է 16,562,000 րուբլու չափ։ Տուգանքներից սպասւում է 1,200,000 ր.։ Տուգանքի այդ սպասելիքի չափն արդարացնելու համար նախահաշւում յիշուած է, որ 1914 թուին մամուլի օրէնքի խախտման պատճառով ստացուել է 197,750 ր. տուգանք, զինուորական ծառայութիւնից խուսափելու համար՝ 149,579 ր., պարտադիր որոշումների խախտման համար՝ 691,178 րուբլի։

Ներքին գործոց մինիստրութեան ծախսերի նախահաշիւը ենթադրում է 126,875,253 րուբլի, այսինքն նախորդ տարուց 9,851,000 ր. աւելի։

Լրացուցիչ թերթի մէջ ասւում է, որ պատերազմական ծախսերը մինիստրութեանն ստիպեցին իր բիւջէտը կրճատել։

ՊԵՏ. ԳԱՆՁ. ԴԵՊԱՐՏԱՄԵՆՏԻ ՆԱԽԱՀԱՇԻՒԸ

Համաձայն Դումա մտցրած նախահաշւի՝ Պետ. գանձ. դեպարտամէնտի առաջիկայ ծախսերը հաշւուած են 173,045,000 րուբլի, նախորդ տարուց 20,608,000 րուբլով պակաս։ Այդ ելքը շատանում է կենսաթոշակներով, որի համար նախահաշւի մէջ մացրուած է 100,310,000 րուբլի, նախորդ տարուց 19,700,000 րուբլով աւելի։

ԱՐՏ. ԳՈՐԾ. ՆԱԽԱՐԱՐՈՒԹԵԱՆ ՆԱԽԱՀԱՇԻՒԸ

1916 թուի ծախսերը հաշւուած են 7,193,891 րուբլի, նախորդ տարուց 596,000 ր. պակաս։ Ծախսերի կրճատման գլխաւոր պատճառն այն է, որ Գերմանիայից, Աւստրո-Հունգարիայից և Թիւրքիայից յետ են կանչուած մինիստրութեան պաշտօնեաները։ Բացի այդ՝ պատերազմի պատճառով յետաձգուած է հիւպատոսներին վերաբերուող որոշումների իրագործումը Միլանում, Բուխարայում, Պրագայում, Կաստորիայում, Իպեկում և Խարպուտայում։

Լրացուցիչ թերթի մէջ ասւում է, որ Չիկագոյում և Ամերիկայում ռուս բանուորների թիւը հասնում է 1 միլիոնի։ Իրաւաբանների բացակայութեան պատճառով բազմաթիւ բանուորներ գործարանատէրերից վնասներ չեն կարողանում ստանալ։ Այդ պատճառով էլ մինիստրութիւնը հիւպատոսարանին կից իրաւաբաններ է պահում՝ բանուորներին խորհուրդներ տալու, որի համար յատկացրուած է 3,000 րուբլի։

ԳԱՒԱՌԻ ԿԵԱՆՔ

ՂԱՉԱՂ ՍՈՒԼԷՅՄԱՆԸ

Թէ Հին-Նախիջևանի գաւառը և թէ ստ հասարակ Սիսիան - Զանգեզուրի վիճակը այս ամբողջ ամառը և մինչև օրս անգամ սարսափի օրեր է անցնում՝ շնորհիւ զանազան կողմերում վխտացող աւազակների։ Չնայելով, որ աւազակապետ ղաչաղը մէկն է, սակայն նրա անունով սկսել են իրենց չահատակութիւնները սփռել ամեն կողմ զանազան լոթի, չաթուրեասան բաղդախնդիր թուրքեր և այդպիսով վրդովել երկրի ապահովութեան խաղաղութիւնը և զրկել նրան իր առօրեայ աշխատանքները կատարելուց։

Այդ մէկ գլխաւոր աւազակապետը մի ժամանակ Պարսկաստանի Ղարադաղում յայտնի Ռահիմ խանի աջ թեւը կազմող ռուսահպատակ ղաչաղ Սուլէյմանն է, Մաղանի գաւառի Անմէգալլար գիւղացի, որը այնտեղ Ղարադաղում պարտուելուց յետոյ իր տասն ու հինգ արիւնարբու ձիաւոր ընկերներով անցնելով սահմանը՝ բուն է դնում Սիսիանի և Նախիջևանի գաւառները միմեանցից բաժանող Սալվարթու լեռան լանջերում, Նախիջևանից դէպի Սիսիան - Զանգեզուր տանող գլխաւոր ճանապարհի վրայ։ Նա յայտնի ղաչաղ է, ունի բաւականին ժողովրդականութիւն։ Թուրքերը նրան յարգում են և պատւում ոչ թէ լոկ իբրև Նադիրի կամ Քեարամի պէս մի ղաչաղի, այլ իբրև զուտ ազգասէրի, յեղափոխական, կազմակերպող և ղեկավարող յայտնի մի ոյժի։ Դրա համար էլ այդ Սուլէյմանն օգտուելով իր դիրքից, առ այժմ նստած իր վրաններում, շուրջը հաւաքած իր բոլոր հարստութիւնը, որը կազմուած է անթիւ ոչխարներից, ձիերից և ուղտերից, ազատ, համարձակ նամակներ է գրում զանազան կողմերի թուրք հարուստներին, պահանջում և ստանում է մեծաքանակ գումարներ, իսկ այդ գումարներով նա իր զանազան կողմերի արբանեակների միջոցով գնում է զէնք և ռազմամթերքի բաւականին հարուստ պաշար, հրաւիրում է իր մօտ զէնք կրելու ընդունակ երիտասարդների, զինում վարձկանում է նրանց և, ինչպէս պատմում են ականատես մալականները և սիսիանցի հայերը, այժմ նրա խումբը հասել է մօտ քառասունի, իսկ համակրողների թիւը հինգ հարիւր։ Մի ստրաժնիկ պատմում էր, որ դրանց հալածելու համար բաւական չէ ունենալ և լիանային թնդանօթ...

«Հորիզոն»

Թատրոն եւ Երաժշտութիւն

ՅՕԳՈՒՏ ԳԱՂԹԱԿԱՆ ՈՐԲԵՐԻ

Այսօր տեղիս թատերասէրների ընկերակցութիւնը, ղեկավարութեամբ տիկ. Ալմա-Սափրազեանի, ռեժիսորութեամբ տիկ. Հրաչիայի և մասնակցութեամբ դերասան Կոստանեանի, յօգուտ Բագուի գաղթական որբերի կը ներկայացնէ Շիրվանզադէի «Կործանուածը»։

Օգնութեան կարօտ են ոչ միայն սահմանի մօտ եղած որբերն ու գաղթականները, այլև տեղս բերուածները. ի նկատի ունենալով այն ծանր դրութիւնը, որին ականատես ենք ամենքս, յուսով ենք, որ այսօր Բագուի հայ հասարակութիւնը որբերին խնամելու գործն իրեն սրտին մօտ ընդունելով՝ կը լցնի թատրոնն և այդպիսով կը խրախուսի նաև այն թատերասէրներին, որոնք մտադիր են այդ նպատակով մի շարք ներկայացումներ տալ։

ՎԵՐՋԻՆ ԼՈՒՐԵՐ

— Սօֆիայի ռուսական դեսպանը հեռագրում է, որ Բօլգարիայի պատասխանն անբաւարար է ոչ միայն բովանդակութեան կողմից, այլ և ձևի։ Դեսպանը յայտնում է, թէ այլևս ինձնից բացատրութիւններ չսպասէք։

— Բօլգարական դեսպանի Ռուսաստանից հեռանալու մասին Բօլգարիայից ոչ մի կարգադրութիւն չի եղել։

— «Рѣчь»-ին հեռագրում են, որ Ցունաստանը որոշել է դաշնակից զօրքերին ճանապարհ տալ դէպի Սերբիա, որովհետև Ցունաստանին միացուած հողերը միջազգային օրէնքով դեռ ևս յոյների վրայ չեն հաստատուած։

— Թիւրքական զօրքերը եկան Դէդէ-Աղաչ։

— Դաշնակից զօրքերը Սալօնիկի վրայով գնում են Ուսկիւբ։

— Իտալեան որոշել է մասնակցել Բալկանեան պատերազմին։ Սօննինօն այդ մասին խորհրդակցութիւն է ունեցել Համաձայնութեան պետութիւնների դեսպանների հետ։

— Աթէնքում սպասում են Վիլհելմի լիազօրին, որը Ցունաստանին պիտի համոզէ հանդէս գալու սերբերի դէմ։

— Բօլգարիան փակել է Դունայի նաւահանգիստները։ Զօրահաւաքը վերջացած է։

— Սալօնիկի յոյն և հրէայ բնակիչները ցնծութեամբ են դիմաւորել դաշնակիցների զօրքերին։

— Բավարական բազմաթիւ սպաներ հրաժարական են տուել գերմանական բանակին։ Պետութիւնը գնդակահարելու սպառնալիքով յետ է կանչում նրանց։

— Գեներալ Սավովը հրաժարուել է բօլգարական բանակի հրամանատարութիւնից։ Հրամանատարութիւնը յանձն է առել Ֆերդինանդը։

— Օդեսայից հաղորդում են, որ տեղական բօլգարները բողոքել են Ռադոսլաւովի քաղաքականութեան դէմ։ Տաւրիկեան նահանգի բօլգարների մեծամասնութիւնը հրաժարուել է երկիր վերադառնալ։

— Հրէաներին արգելուած է գնալ Կիև։

— Գերմանական մամուլը հաղորդում է բօլգար-ռումանական համաձայնութեան մասին։

— Սօֆիայում բազմաթիւ խուզարկութիւններ են կատարւում։

— Թիւրքական հետևակներ են երևացել յունական սահմաններում։ Մի կորպուս թիւրքական զօրք է պատրաստւում Բօլգարիային օգնելու համար։

— Իտալիայում սպասում են, որ Ռուսաստանն անյապաղ Բօլգարիայի դէմ պատերազմական գործողութիւններ կը սկսի ծովային սահմաններից։

— Կոպենհագէնից հեռագրում են, որ Բեռլինի լուրերի համաձայն՝ Համաձայնութեան պետութիւնների դեսպանները հեռացել են Սօֆիայից, բացառութեամբ անգլիական դեսպանի։

— Աթէնքից հաղորդում են, որ ներկայումս 400 գերմանական սպաներ կան Բօլգարիայում։

— «Б. В.» գրում է, որ եթէ բօլգարացիները յարձակուեն Սերբիայի վրայ, այն ժամանակ յոյներն էլ հանդէս կը գան։ Իսկ եթէ գերմանացիներին յաջողուի սերբերին ջախջախելով անմիջական կապ հաստատել Թիւրքիայի հետ, յոյները կը մնան պասիւ դիրքում, եթէ նոյնիսկ դաշնակիցները պատերազմական գործողութիւններ սկսեն Բօլգարիայի դէմ։

— Վիլհելմի նախագահութեամբ խորհրդակցութիւն եղաւ՝ Սերբիայի դէմ դուրս գալու համար։

«Р. В.» հաղորդում է, որ Գերմանիան Աթէնքին բողոք է ներկայացրել Սալօնիկում դաշնակիցների զօրք իջեցնելու դէմ։

— Բօլգարական գեներալներից ոչ մէկը չհամաձայնեց հրամանատարութիւն ստանձնել՝ հաւատացած, որ փաստապէս բանակը կառավարելու են գերմանացիները։ Թշնամական յարաբերութիւնները կը սկսուեն հինգշաբթի օրը։

— Ճնայած Վենիզելոսի հրաժարականին՝ Ցունաստանի քաղաքականութեան մէջ մեծ փոփոխութիւն չի կատարուել։ Զաիմիսը փորձուած քաղաքագէտ է և դաշնակիցների կողմնակից։

— Բուխարէստից հաղորդում են, որ ամբոխը առաջ Սօֆիայի ռուսական դեսպանատան զինանշանը պոկել են և դրօշակը դէն ձգել։

— Բօլգարիայում ձերբակալել են 1000 հայ կամաւորների, որոնք պատրաստւում էին գալ Ռուսաստան։ Երկիւղ կայ, որ նրանց կը յանձնեն Թիւրքիային։

—«Р. В.» հաղորդում է, որ Ռումանիայի բոլոր քաղաքներից յոյն պահեստայինները մեծ խմբերով գնում են հայրենիք։ Նրանց թիւը հասնում է 15—20 հազարի։

ՆԱՄԱԿՆԵՐ ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ

Վլադիկավկազ, 23 սեպտեմբ.

«Արեւ»-ի յարգելի խմբագրութեան,

Թոյլ տուէք, խնդրում եմ, «Արեւ»-ի միջոցով շնորհակալութիւն յայտնել իմ ծխականներ պ. պ. Առաքել Տոնականեանին և Բախչի Ղարիբեանին, որոնք յանձնեցին ինձ յօգուտ մեր գաղթականների՝ առաջինը իր մօր յիշատակին 25 րուբլի, երկրորդը դուքանչի յիշատակին 10 ռուբ.։ Գումարները յանձնուած են տեղիս Բարեգործականին՝ յանձնելու գաղթականներին և մուծուած են օգոստոսեան գրոսանի հաշիւների մէջ։

Ց. ք. Սաղիկեան

Խմբագիր՝
ԱՐԱՄ ԱՌԱՔԵԼԵԱՆ
Редакторъ
АРАМЪ АРАКЕЛЯНЪ

Печатать дозволено военной цензурой.

ԵՐԿԱԹՈՒՂԱՅԻՆ ԵՐԹԵՒԵԿՈՒԹԻՒՆ

ԱՆԴՐԿՈՎԿԱՍԵԱՆ ԵՐԿԱԹՈՒՂԻ

Բագուից—Թիֆլիս

Մեկնում է

Արագընթաց	№ 5 առ.	ժ.	6 և 13 ր.
Փոստատար	№ 3 ցեր.	ժ.	4 և 50 ր.
Մարդատար	№ 7 եր.	ժ.	10 և 05 ր.

Թիֆլիսից—Բագու

Հասնում է

Արագընթաց	№ 6 առ.	ժ.	11 և 10 ր.
Փոստատար	№ 4 եր.	ժ.	6 և 05 ր.
Մարդատար	№ 8 ցեր.	ժ.	5 և 27 ր.

ՎԼԱԴԻԿԱՒԿԱԶԵԱՆ ԵՐԿԱԹՈՒՂԻ

Բագուից—Ռոստով

Մեկնում է

Արագընթաց	№ 1 եր.	ժ.	11 և 30 ր.
Փոստատար	№ 3 ցեր.	ժ.	12 և 30 ր.
Մարդատար	№ 7 առ.	ժ.	8 —
»	№ 11 առ.	ժ.	5 և 10 ր.
Ապր.-Մարդ.	№ 21 առ.	ժ.	4 և 20 ր.

Ռոստովից—Բագու

Հասնում է

Արագընթաց	№ 2 երեկ.	ժ.	10 և 10 ր.
Մարդատար	№ 4 երեկ.	ժ.	11 —
»	№ 8 առ.	ժ.	10 և 20 ր.
»	№ 12 առ.	ժ.	7 և 30 ր.
Ապր.-Մարդ.	№ 22 առ.	ժ.	10 և 40 ր.

Բագուից Հանքային Ջրեր

Մարդատար	№ 3 առ.	ժ.	10 և 30 ր.

Հանքային Ջրերից Բագու

Մարդատար	№ 3 ցեր.	ժ.	4 և 30 ր.

ԾԱՆՕԹ. Պետրօգրադի ժամերով տեղական ժամանակն ստանալու համար պէտք աւելացնել 1 ժ. 18 րոպէ։

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Հրատարակութիւն «ԱՆԹԱՌԱՄ» Ընկերութեան։ Тип. Н. А. Эриванцова, Баку, тел. 44-10 Въ этомъ номере четыре страницы Издательство Т-ва на вѣрѣ „АНТАРАМЪ"